ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԴԻԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

financed by
Austrian Development Cooperation

ԿԱՆՈՆՆԵՐԸ

Քանի որ կենդանիների որոշ հիվանդություններով կարող են ախտահարվել նաև մարդիկ (զոոնոզներ), անհրաժեշտ է հիվանդ կամ անկած կենդանուն հետազոտելիս ցուցաբերել զգուշավորություն:

Ցավի մեջ գտնվող կամ շփմանն անսովոր կենդանիները կարող են իրենցից վտանգ ներկայացնել՝ հարձակվելով իրենց հետազոտող մարդու վրա:

- V Կենդանիների հետ շփվելիս կամ հետ-սպանդային հետազոտություն իրականացնելիս, ՄԻՇՏ ԿՐԵ՛Ք մեկանգամյա օգտագործման ՁԵՌՆՈՑՆԵՐ:
- V Ձեռքի տակ ՄԻՇՏ ՈՒՆԵՑԵ՛Ք ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ախտահանիչներ և վերքի մշակման նյութեր, թեթև վիրակապեր, կպչուն վիրակապեր և այլն):
- V Կենդանիներին զննելուց առաջ, ՀԱՄՈՁՎԵ՛Ք, որ նրանք պատշաճ կերպով անշարժացված են:
- V Եթե կենդանուն զննելիս վնասվում եք, ԱՆՄԻՋԱՊԵՍ ՎԵՐՔԸ ԼՎԱՑԵ՛Ք ջրով և օճառով, մշակեք հականեխիչ որևէ նյութով և ծածկեք թեթև վիրակապով:
- V Կենդանիների կամ դիերի հետ աշխատելուց հետո ՄԻՇՏ օճառով և ջրով լավ ԼՎԱՑԵ՛Ք ՁԵՌՔԵՐԸ (ԱՆԿԱԽ նրանից, աշխատելիս ձեռնոցներ կրել եք, թե ոչ):
- V Երբեք ՄԻ ՍՆՎԵ՛Ք, ԽՄԵ՛Ք ԿԱՄ ՇԽԵ՛Ք կենդանիների կամ դիերի հետ աշխատելու ընթացքում:
- V ՄԻ ՄՈՏԵՑԵ՛Ք ագրեսիա ցուցաբերող կամ որևէ այլ տարօրինակ պահվածքով կենդանիներին, որոնց մոտ կասկածում եք կատաղություն հիվանդությունը: Այսպիսի դեպքերում անմիջապես ԴԻՄԵ՛Ք Ձեր համայնքի լիազոր մարմիններին կենդանուն վնասազերծելու համար:
- V Կատաղության մեջ կասկածվող կենդանու ուղեղը հեռացնելիս ԿՐԵ՛Ք կրկնակի ձեռնոցներ, բժշկական դիմակ և պաշտպանիչ ակնոցներ:
- V Եթե ձեզ կծել է կատաղության մեջ կասկածվող կենդանի, ՎԵՐՔՆ ԱՆՄԻՋԱՊԵՍ ԼՎԱՑԵ՛Ք օճառով և մեծաքանակ հոսող ջրով, ախտահանեք այն և հնարավորինս շուտ դիմեք մոտակա բժշկական հաստատություն:
- V Բրուցելյոզից կամ այլ վարակներից խուսափելու նպատակով, պտղի կամ ընկերքի հետ աշխատելիս ԿՐԵ՛Ք ձեռնոցներ, բժշկական դիմակ և պաշտպանիչ ակնոցներ:

CARD
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
HEIFER INTERNATIONAL

financed by
Austrian
Development Cooperation

Մաքրում և ախտահանում

- Հեռացրե՛ք տեսանելի կեղտը և գոմաղբը:
  Քանի որ օրգանական մնացորդների, հատկապես գոմաղբի առկայության դեպքում շատ ախտահանիչ նյութերի օգտագործումը դառնում է անարդյունավետ:

- Փոշու առաջացումը կանխելու համար տարածքը թրջե՛ք օճառաջրով: Օգտագործելով խոզանակ մանրակրկիտ լվացե՛ք բոլոր մակերեսները, ներառյալ ջրամանները, կերամանները, գործիքներն ու առարկաները:

- Լվացող նյութերը լրիվ հեռացնելու համար առատ ջրով պարզաջրե՛ք լվացած մակերեսները: Քանի որ, որոշ ախտահանիչ նյութեր լվացող միջոցների ազդեցությունից կորցնում են իրենց արդյունավետությունը:

- Նախքան ախտահանիչ նյութ օգտագործելը թույլ տվե՛ք, որպեսզի թաց մակերեսները լավ չորանան:

- Անասնաբույժ մասնագետի խորհուրդով ընտրե՛ք և օգտագործե՛ք համապատասխան ախտահանիչ նյութ:

- Լավ արդյունքի հասնելու համար թույլ տվե՛ք, որպեսզի ախտահանիչ նյութը մակերեսի հետ շփվի առավելագույն երկար ժամանակ: Այս ժամանակը կախված է օգտագործվող ախտահանիչի տեսակից, ախտահանող նյութի խտությունից և շրջակա միջավայրի ջերմաստիճանից:

- Պարզաջրե՛ք հոսող ջրով: Ջրի շիթը պահե՛ք վերևի մակերեսներից դեպի ներքև:

- Նախքան կենդանիներին անասնաշենք տեղափոխելը թույլ տվե՛ք տարածքն ամբողջովին չորանա:

- Քանի որ փայտյա առարկաները,կառույցները, խնամքի պարագաները հնարավոր չէ լիովին ախտահանել, խորհուրդ է տրվում դրանք այրել և փոխարինել նորերով:

- Մաքրումն ու ախտահանումը սկսելուց առաջ հագե՛ք ձեռքերը և ոտքերը պաշտպանող հագուստ: Օգտագործե՛ք ձեռնոցներ, պաշտպանիչ ակնոցներ և շնչաղիմակ, քանի որ օգտագործելու եք ախտահանիչ նյութեր, որոնք կարող են վնասել Ձեր մաշկը, աչքերը և շնչառական ուղիները: Ախտահանիչ նյութերի աշխատանքային լուծույթների տարաների պիտակների վրա անպայման նշե՛ք պատրաստված նյութի անվանումը, խտությունը և նոսրացման ամիս, ամսաթիվը:

CARD
ՀՀ Գյուղատնտեսության
նախարարություն
HEIFER INTERNATIONAL